Անդլիական կառավարութիւնը ապստամբ բանւորների և զիւղացիների նկատմամբ ձեռք առաւ ամենախիստ միշտներ, նրանց զեկավարներից 15 հոգի գնդակուհարւեցին: Նրանցից մէկը, սոցիալիստ կոննովին, որ ապստամբութեան ժամանակ վիրաւորւած էր՝ սպանւեց պատգարակի վրայ պառկած ժամանակ: Մի քանի հոգի սպանւեցին անդլիացի օֆիցերների ձեռքով առանց որեիցէ գատի և քննութեան: Մի քանի հաղար հոգի բանտերն են զցւած և աքսորւած իրանդիալից:

Բայց իրանդացիների դէմ ձեռք առնւած այդ կտրուկ միշտները նպատակի չհասան: Յեղափոխական շարժութը առաջ է գնում. այժմս ամբողջ իրանդիան յեղափոխական կլուբներով ծածկւած է որոնք բոլոր աշխատաւորներին միացնում են միմիանց հետ: Իրանդական բանւորներն ու զիւղացիները երկար ժամանակ անդլիացիների հետ կողը կողը

ապրելուց յետոյ՝ փորձով տեսան, որ անզլիացի կապիտալիստներն ու շինովնիկներն աշխարհի ամենասարսափելի հարստահարիչներն են։ Ամեն մի իրանդացի ասում է անզլիական կառավարութիւնը և ընդունում է, որ ամեն մի միջոց որ ուղղւած է անզլիական կառավարութեան գէմ զօվելի է։ Որպէսզի իրանդական ժողովուրդը հնագանդ մնայ անզլիական կառավարութիւնն ստիպւած է «Կանաչ կզզի» ուղարկել դնդերով զինւորներ և ոստիկանութիւն։ Անզլիացիները միմիայն ուժի միջոցով են կարողանում դժուխ դալ անհնաղանդ կզզու հետ։

### Ի՞նչ է ԿԱԾԱՐԻՈՒՄ ՄԻՒՍ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Երկրագնդի միւս մասերում էլ, որոնք գտնւում են անզլիացիների ծեռքում, կան շրջաններ, որտեղ զիւղացիները տառապում են։ Հարաւա-աֆրիկան ազատ ուսմէկավարութիւնները (բօէրներ) նոբազէս անզլիացիները բանութեամբ իլեցին և դա շատ հասկանալի էր, որովհետեւ անզլիացի վաճառական արդիւնաբերողները ցանկանում էին այնտեղ գտնւած ոսկուն և գոհարեղիններին տիրանալ։ Անզլիացիներն երեք տարի շարունակ այդ երկիրն աւերածութեան ենթարկեցին, մինչև որ կարողացան նրանց իրանց իշխանութեամբ ենթարկել։ Վերշին տարիներում, Հարաւալին Աֆրիկայի տեղական բնակչութեան մէջ մի քանի անդամ առաջ եկան մեծ զործադուլներ և ժողովրդական շարժութեար, դոքա ուղղւած էին Անզլիացին և նրա հովանաւորութեան տակ դոնւող հարաւաֆրիկեան կառավարութեան դէմ։ Այդ ուսմէկավարութիւններն ալժման հայկաստանի և իրանդիայի ուղիով են դնում ձգտում են բաժանել Անզլիացից և կատարեալ անկախութիւն ձեռք բերել։

Կանադայի և Ավստրալիայի զիւղացիներն ու բանւորները նոյնպէս (դոքա Անզլիացի միւս երկու մեծ տիրապետութիւններն են) ձգտում են բաժանել Անզլիացից, կատարեալ

անզլիառութիւն ձեռք բերել և ոչ մի կախում չունենալ Անզլիացի կապիտալիստներից։ Մենք աեսնում ենք որ, ուրեմն բարոր երկրներում, ուր թագաւորում են անզլիական վաճառականները, արդիւնաբերողներն ու գեներալները, աշխատաւոր ժողովուրդը շատ վաս է ապրում և ձգտում է ազատագրուել անզլիական լծից։ Բոլոր երկրները, որոնք գրաւված են անզլիացիների ձեռքերով, ունին իրանց մէջ չեղափոխական շարժում, որ ուղղւած է անզլիական կառավարութեան գէմ։

### ԹՌԽՍՍՍՏԱՆԻՆ Ի՞ՆՉ Է ՍՊԱՍԹԻԾ

Այս բոպէին անզլիական զօրքերը միւս դաշնակիցների հետ միասին ուղղւում են դէպի Յուսաստան, որպէսզի բրոնզը առաջնադրաւեն նրան և յանձնեն Անզլիացին։ Անզլիական լուծը ուու բանւորներին և զիւղացիներին նոյնպիսի ծանր վարձութիւնների կենթարկի՝ ինչպէս որ ենթարկեցին Հնդկաստանի, Իրանզիայի և Եգիպտոսի զիւղացիները։ Անզլիացիները Մուսաստանի կալածատերերին ու հարսւաներին են օգնելու, իսկ զիւղացիների ու բանւորների ուժերին դնելու են նոցա ուժից աւելի ծանր քու։

Անզլիացիները կաշխատեն, որպէս նոքա արեցին Հնդկաստանում, Մուսաստանից արտահանել զանազան տեսակի մթերքներ և ապրանքներ։ Նոքա զիւղացիների վրայ ծանր հարկեր կդնեն և նրանց ձեռքից կվերցնեն հունգի մեծագոյն մասը։ Նոքա մէր երկիրը կհասցնեն սովամահութեան սարսափներին, որպիսիները տեղի ունեցան Հնդկաստանում։ Նոքա ուու ժողովրդին կստրկացնեն և նրանց վրայ վարիչներ կը նշանակեն իրանց չինովնիկներին, կալածատերերին և հին ցարական գեներալներին։ Հէնց որ դաշնակիցները երեացին Արխանգելսկում և Ռիբիրում և Ռուկրանայում, իսկոյն բարեկամացան սպիտակ գվարդիֆականների հետ և չանացին օգնել զանազան զենիկիններին, կոլակներին, կրասնովներին և սկառապաղսկիններին։

Մեր կարմիր բանակը կռիւ է մղում անգլիացիների դէպի Ռուսաստան մղած յարձակման դէմ: Նա Խորհրդավին հանրապետութիւնը պաշտպանում է անգլիական կապիտալի ճնշումներից: Նա իրա յամառ կռւով արդելում է դաշնակիցներին տիրապետելու մեր ամենահարուստ շրջաններին. չինսէր կարծիր զօրքը՝ անգլիացիները կտիրանային մեր երկրին և կսկսէին տնօրինութիւններ անել ոչ վատ քան գերմանացի գեներալները:

Մենք անգլիացիների յարձակման դէմ մղած կռւում մենակ չենք մնալու: Մեզ կօգնեն ոչ միայն հնդիկ, իրանգացի և եղիպտացի դիւղացիները՝ ալ և այդ երկրների բռնւորները. անգլիացի բանւորներն էլ են կռւում իրանց կառավարութեան և իրանց կապիտալիստների ու կալւածատէրերի դէմ: Անգլիական բանւորներն արդէն հասկանում են, որ Խորհրդավին Ռուսաստանն իրանց շահերն էլ է պաշտպանում: Նոքա կամաց կամաց հասկանում են որ անգլիական թալանչի կապիտալը, որ պատրաստւում է ամբողջ աշխարհը կուլ տալ՝ վտանգաւոր է հէնց իրսնց համար: Թուս բանւորներն ու գիւղացիները կգտնեն Անգլիայում իրանց համար հաւատարիմ օգնականներ և բարեկամներ, որոնց օգնութեամբ Խորհրդավին Ռուսաստանին կաջողութի ոչ միայն անգլիական յարձակմանը տալ հականարւած՝ ալ և կործանել ամբողջ աշխարհի կապիտալիստների և կալւածատէրերի թագաւորութիւնը:

## Ա. ԿԱՐԻՆԵԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐՆ ԱՆԴՎՈՎՎԱՍՈՒՄ

## ՎԵՐՋԱԲԱՆ

ՅՆԴԼԻՇԿԱՆԻ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՆԴՐԿՈՎԿՈՍՈՒՄ

I.

Անդլիական իմպերիալիստները ներս և խուժել Անդրկովկան շնորհիւ սոցիալ-դաւաճանների և Անդրկովկասեան իմպերիալիստների աջակցութեան։ Այդ կուսակցութիւնները ոչ միայն ցանկալի են համարել օտարերերեալ աւաղակների ներմուտքը, այլև դորժադրել են բոլոր ջանքերն իմպերիալիզմի դիրքը ոմրացնելու համար։

Սոցիալիստ-լիդափոխականները, ձենշեիկներն և գաշնակցականները կազմել են Բագւում հակայեղափոխական ընդհանուր մի միութիւն և տապալելով Խորհրդային իշխանութիւնը հրաւիրել են անդլիացիներին։ Խսկ պլութարիատի կիսագիտակից տարրերը տաճկական իմպերիալիստների արշաւանդի աղդեցութեան ներքոյ կուրօրէն հետեւել են Բագւի հակայեղափոխականներին և կազել են իրենց բոլոր լուսներն անդլիական իմպերիալիզմի հետ։

Այդպիսի պայմաններում անդլիացիների համար շատ հեշտ էր տիրել Անդրկովկասին։ Իրերի գրութիւնը ստեղծել էր օտարերերեալ (ազգատարարների) համար ամենանպաստաւոր պայմաններ։ Անդրկովկասը կանգնած էր տաճկական և րեգական բանդաների արշաւի հանդէպ։ Եւ թիւրք-դերմանական աւաղակտիւմքերից ստրոտիած բնակչութեան խոշո-

բագոյն մասը պատրաստ էր ոչ միայն ողջունել անդիմացիներին, այլև ամենայն կերպ աշտկցել «Եւրոպական» իմպերիալիստներին:

Այդպէս էլ լինում է:

Անդիմական իմպերիալիստները գտնում են ամենատիրակար ընդունելութիւն Կովկասում:

Բագւում, սոցիալ դաւաճան կուսակցութիւնների ձեռներէցութեամբ Բանւորական և Զինւորական Խորհրդի շենքում կազմակերգութել էր մի շքեղ բանկէտ: Այդ բանկէտին մասնակցել են անդիմական զինւորականներն և նոր, հակայնդափախական կառավարութեան, այսպէս կոչւած Ցէնտրօկասպիի և ժամանակաւոր Գործադիր Կոմիտէի գիշտատուրան: Այդ բանկէտում անդիմական իմպերիալիստներն ողջունել են «Ճարկարգերն» և շեշտել են, որ Նրանք եկել են ոչ թէ զաւթելու Բագւուն, այլ պաշտպանելու և ազատագրելու: Այնազ Նրանք երդւել և խոստացել են դրադեկան միմիայն քաղաքի պոշտապանութեան դարձով:

Անդիմացիների խոստամներն և ճառերը շշմեյուցիչ տպաւորութիւն են թողել Բագւի սոցիալ-դաւաճանների վրայ ու դրանք շատպել են բայտնել իրենց շնորհակալութիւնն և երախտադիտական դդայմունքները: ԹԶգացւածու ձայնով ներքողական ճառեր են արտասանել էսէրների կողմէց՝ Վէլունցը, մենշևիկների կողմէց՝ Ալոլօն, իսկ դաշնակցականների կողմէց՝ Մէլիք Եօլչեանցը: Դրանք երեքն էլ խռոստացել են օգնել ու օժանդակել «Կուլտուրական» անդիմացիներին, երդւել են հաւատարիմ լինել և եղբայրաբար դաշնակցել նոր ազատարարների հետ, կատարել անդիմական շտաբի բոլոր կարգադրութիւնները:

Այդ բոլորից յետոյ անդիմացիների համար չափազանց հեշտ էր զրաւել քաղաքը: Յենւելով դաւաճան կուսակցութիւնների և քաղաքի արևոտական բնակչութեան վեալ Նրանք աստիճանաբար իրենց ձեռքն են առել կառավարու-

թեան ամբողջ ղեկը: Անդիմացիները դառել են Բագւի ամենազօր տիրակալները: Եւ նրանց որոշմամբ յետագալում տանաստոք և գաւաճան կերպով, Տուրիեստանի աւազուտ անպատճենում գնդիմականարաւել են Բագւի 26 կոմիտարները, Կովկասեան պրոլետարիատի լաւագոյն ներկայացուցիչները:

Սակայն անդիմացիներին ևս չի յաջողւել պաշտպանել քաղաքը: Տանկական զօրագնդերը մտել են քաղաք, իսկ անդիմացիները փախել են սկզբում Պետարովսկ և Կրասնովոդսկ, իսկ յետագալում Պարսկաստան: Փախչելով Նրանք զլացել են նոյնիսկ նախազդուշացնել այն խաղաղ բնակիչներին, որոնք հաւատալով անդիմացիներին և ապաւինելով Նրանց մացել են Բագւում: Եւ այդ պատճառով կոտորածի է մատաւել 20000-ի չափ խաղաղ ազգաբնակչութիւնը: Քաղաքի հայկական մասն ամբողջովին աւերւել և հիմնայատակ է արւել:

Տանկական զօրամատերն իրենց ամբողջ անբաւականութիւնն և կատաղութիւնը թափել են Բագւի բնակչութեան վրա: Բագւում հաստատել է ամենամոլեգին և ցինիկ նացօնալիստական-կալւածատիրական կառավարութիւն, մի կառավարութիւն՝ որ պետական պաշտօնները յանձնել է գողերին և աւազակներին, իսկ սպեկուլեանաներին առել է ամենամեծ լիազօրութիւն տնտեսական ասպարիզում:

Չնայած դրան այդ արիւնաբրու և լանցապարտ կառավարութիւնը լեազգայում ստացել է անդիմացիների կողմէց ամենամեծ հովանաւորութիւն:

Երբ Տանկաստանը տապալւել է Բագւու ևս մտել նորից արտաքսած անդիմացիները:

Այդ հանգամանքը ոգեսորել է յուրախարւած սոցիալ-գաւաճաններին և մեր նացիօնալիստաններին:

Հայ նացիօնալիստաններին թւռւմ էր, թէ անդիմացիները կվարձատըն հայերի անդիմացիրութիւնը և պատմելով մուսֆաթականնեշին կսեղծեն ամենալաւ և բարեկարգ կացութիւն հայերի կտմար: Իսկ էսէրներն և մենշևիկները

սպասել են անդլիացիներից «գեմոկրատական կարգերի» վերահստատումը:

Սակայն կատարւել է հակառակը:

Անդլիացիները հաշտել են տաճկական իմպերիալիստների հետ: Ու մտնելով թագու նրանք աշխատել են ամենից առաջ օգտւել ազգային տարբեր հատւածների տարածայնութիւններից:

Նրանք ոչ միայն չեն պատժել յանցաւոր և արիւնարքու մուսափաթական կառավարութեան ներկայացուցիչներին, այլև բարեկտամական ամենասերտ դաշնաք են հապտատել Աղրբեկանի կառավարութեան հետ: Միաժամանակ դրա հետ անդլիական իմպերիալիստները հովանաւորել են լիշեալ կառավարութեան բոլոր բանակալական քաղերը:

Թագում վերանորոգւել են ցարական կարգերը: Ալլուել է ամենախիստ հալածանք բանաւորական շարժման առաջաւոր ներկայացուցիչների լեղափոխականների դէմ:

Ազգային տարածանութիւններն ոչ միայն չեն դադարել, այլ ընդունել են աւելի ևս սուր բնաւորութիւն:

Քրիական յանցանքները քաղաքում և ամրող Աղրբեկչանի տերըիտիալի վրայ բաղմացել են:

Թագում անդլիացիները բռնի միջոցներով արտաքսել են աղքատ ընտանիքներն իրենց կացարաններից և բնակեցրել են անդլիական զինուորներով:

Թագւի ժայռածասում՝ բանաւորական կվարտալում Աղրբեկանի կառավարութիւնը «քաղաքակիրթ» անդլիացիների հովանաւորութեամբ նորից բաց է արել այն պոռնկատները, որոնք փակւել էին Խորհրդային կառավարութեան կարգադրութեամբ: Եւ նոր պանդոկատերերի ու պոռնկատների համար յարմարութիւններ ստեղծելու նպատակով արտաքսել են իրենց բնակարաններից բոլոր չքաւորները, բանաւորներն և նրանց ընտանիքները:

Այդ բոլորը կրել է անքան զգւելի բնաւորութիւն, որ

ահապին անբաւականութիւն է ստեղծել քաղաքի նոյնիսկ չափաւոր շրջաններում: Բազւի հակայեղափոխական Դուման իր պարտքն է համարել բողոքել Աղրբեկչանի կառավարութեան լիտի կարգադրութիւնների դէմ: Սակայն այդ կառավարութիւնն ունեցել է հզօրաւոր և ուժեղ հովանաւորներ:

Անդլիական իմպերիալիստներն ամենայն կերպ օդնել և օժանդակել են կալւածատէր - աղդայնականների կառավարութեանը, որովհետեւ այդ կառավարութիւնը համարել են իմպերիալիզմի միակ լենարանը: Եւ վարելով այդպիսի քաղաքականութիւն նրանք անհրաժեշտ են համարել յանուն միջազգային իմպերիալիզմի ամրացնել բոլոր հին միապետական և բուրժուա - կալւածատիրական հիմնարկութիւնները:

## II.

Միւնոյն քաղաքականութիւնն են վարել նրանք նաև Անդրբեկովկասի ֆնացեալ վայրերում:

Աղրբեկչանի հարեւանները՝ Վրաստանը և Հայաստանը նոյնպէս կաղմւած են եղել հակայեղափոխական տարրերից:

Վրաստանի կառավարութեան մէջ իշեալ են ձենշեկիները, իսկ Հայաստանում գաշնակցականները: Այդ երկու հոսանքները պաշտպանել են կապիտալիստական հասարակակարգի հիմքերը և բուրժուա - նացիօնալիստական տարրերի շահերը: Եւ լինելով այդպէս զբանք երկուսն էլ ընդհարւել են միմիանց հետ տարրեր քաղաքական - տերրիտորիական խնդիրների շուրջը:

Հայաստանի և Վրաստանի ռահմանագծի մօտ գտնւել է Ալլավերդի պղնձտհանքը, որը իրաւամբ համարւել է Անդրբեկովկասի հարուստ վայրերից մէկը:

Այդ պղնձահանքերը գրաւել են միաժամանակ և՛ հայ և վրացի նացիօնալիստների ուշագրութիւնը: Եւ ահա սկսւել է ամենասուր մի պալքար երկու հարեւանների մէջ:

Ամենից առաջ երկու կողմերը մէշտեղ են հանել բարութիան արդումէնտները:

Վրաց նացիօնալիստներն աշխատել են համոզել, որ վրաստանն որոշ պատմական իրաւունքներ ունի, որ Լոռայ աշխարհում բնակւել և բնակւում են վրացիներ: Նրանք աշխատել են շահագործել փաստերը և թւերը, ճննել են վրացական դարձնել Սանահինը, չաղբատը, Աւգունլարը և բոլոր ժամաները:

Իսկ հայ նացիօնալիստներն աշխատել են արևեստական միջոցներով հայացնել ա'ն գիւղացիներին, որոնք ապրելով իրենց հարեւան վրացիների հետ անհրաժեշտաբար ենթարկել են վրացական կուլտուրայի աղդեցութեանը և կորցրել են իրենց «հայկական» դէմքը:

Վրացական նացիօնալիստները կամեցել են դաւթել հայկան գիւղերը, իսկ հայ նացիօնալիստները ցանկացել են խել վրացական գիւղերի հետ ամենասերտ կերպով կապւած վրացախօս գիւղերը:

Երկու կողմերն էլ բերել են մի շարք պատմական արդումէնտներ:

Վրացական նացիօնալիստներն ասել են, որ Լոռին հին, աւատական վրաստանի փաստական իշխանութիւններից մէկն է եղել Իսկ հայ նացիօնալիստները շեշտել են, որ Լոռին աւելի ես հին, աւատական հայաստանի մեծահարուստ Մշանը լինելով յախնի է եղել, որպէս Գուգարաց աշխարհ...

Անզլիացիների ներծուութը ողեորել է հայ նացիօնալիստներին: Դրանք ցանկացել են օդուել հանգամանքներից: Եւ հաւատացած լինելով, որ իրենց վազեմի բարեկամները՝ բրիտանական իմպերիալիստները կօգնեն հայերին—դաշնակցականները ոկսել են ավանափւրիստական մի պատերազմ վրաստանի հետ:

Անզլիացիները տեսնելով իրենց Փոքրիկ լոկիների անդուսպ տենչերն կարևոր և անբաժեշտ են համարել միշա-

մտել: Շնորհիւ գրան դափարեցւել է հայ-վրացական պատերազմը:

Միւնոյն քաղաքականութեան են հետեւել անզլիացիները նաև բոլոր ա'ն պարագաներում, երբ ընդհարւել են Անզրկովկասի մնացեալ հանրապետութիւնները: Ամենու ըէք նրանք միջամտել են, որպէս երրորդ կողմ և «խաղաղացնելով» կուողներին ամրացրել են իրենց քաղաքական դիրքը:

Դա եղել է այնքան բնորոշ և ցայտուն մի քաղաքականութիւն, որ գրաւել է նոյնիսկ Կովկասի միամիտ և գուեհիկ նացիօնալիստների ուշագրութիւններ:

Կարճ ժամանակւալ ընթացքում գոյացել են Անզրկովկասում մի քանի «հանրապետութիւններ»:

Ազրբէջանին կից գործել է Ղարաբաղի և Լեռնցիների հանրապետութիւնը: Ղարաբաղի հանրապետութիւնը կենտրոնացել է Շուշայ շրջանում, իսկ Լեռնցիների հանրապետութիւնը Դաղստանում: Այդ երկու «հանրապետութիւնները» լցանել և թուլացրել են Ազրբէջանի ոյժը:

Միւնոյն գերն են կատարել Վրաստանի նկատմամբ Ախալցխալի և Աշարիալի «հանրապետութիւնները»:

Իսկ Հայաստանի կառավարութիւնը ընդհարւել է «Արաքսի» բէկական խանական ահանրապետութեան» հետ: Այդ ահանրապետութիւններից» բացի ստեղծւել են նաև ուրիշ մանր «Ողջանութիւններ» և «պետութիւններ»:

Շնորհիւ այդ բոլոր տարածանութիւնների և երկպառակութիւնների անզլիական իմպերիալիստների գիրքն աստիճանաբար ամրացել է Անզրկովկասի բոլոր վայրերում:

Հովանաւորելով բէկերին, պաշտպանելով կապիտալիստներին և «խաղաղացնելով» կուողներին անզլիացիները հետզհետէ երկիր են մատրել իրենց զօրամասներն ու ուժգնորեն ամրացել Անզրկովկասում:

Իսկ երբ այդ կատարւել է, երբ նրանք վերջնականական

ամքացել են երկրում՝ սկսւել է իմպերիալիզմին յատուկ ցի-  
նիկ բռնակալական քաղաքականութիւնը:

Անդրկովկասի բոլոր վայրերում յետ են խլւել ժողո-  
վրդից բոլոր քաղաքական ազատութիւնները: Բանւորի և  
զիւղացիների համար ամենուրէք ստեղծւել է ամենածանր  
կոցութիւն: Ստեղծւել է բուրժուազիայի և կալւածատիրու-  
թեան ամենազօր տիրակալութիւն: Քաղաքներում, գերծա-  
րաններում հին վաշխառուները, հին շահագործող-բուրժուա-  
ները գուրս են եկել իրենց նկուղներից և նետւել են նորից  
բանորների, աշխատաւորների վրայ:

Գաւառում, գիւղերում հողատեր-բէգէրը նօրից ձախն են  
սաացել և նետւել են գիւղացիների վրայ: Գիւղացիներից  
յետ է խլւել հողը: Աւելի ևս ծանրացել և վատթարացել է  
գիւղացիութեան կացութիւնը բոլոր այն վայրերում, որոնք  
դեռ պատերազմի ընթացքում սնանկացել և քայլաւել են...

Եւ այդ բոլոր ազրուկներին, այդ կալւածատէրերին և  
բուրժուաներին ամենամեծ հաղանաւորողն եղել է անդիի-  
կան իմպերիալիզմը:

Այդ գիտակցել են բոլոր տեղական մանր տիրակալներն  
և բռնակալները, թիւրք կալւածատէրերն և հայ-վրացական  
բուրժուաները:

Այդ նկատել են նաև Անդրկովկասի աշխատաւորական  
տարրերը, բոլոր բանուրա-գիւղացիական խմբերը:

### III.

Անդրկովկասի «ազգալին» հանրապետութիւնների աի-  
րակալներն օդուելով անդիիացիների օժանդակութիւնից  
գործազրել են բոլոր նիգերն իրենց քաղաքական—տնտեսա-  
կան գիրքն ամրացնելու համար: Սակայն այդ նրանցից ոչ  
մեկին չի լաջողւել, որովհետեւ ազգային պետութիւնների  
դարձելակերպը անհրաժեշտօրէն ընդհարւել է տնտեսական  
երականութեան հետ:

Ազգային պետութիւնները բաժանել են նախկին միաց-  
եալ Անդրկովկասը մի քանի մասերի և առանձին սահմաններ  
են գծել ընդհանուր և միանման վայրերի միջև: Ադրբէջանը  
զիկավարւելով նայինալիզմի պրոցերամով առանձնացել է  
Կովկասի մնացեալ վայրերից, իսկ Հայաստանն և Վրաստանը  
ստեղծել են նոյնպէս մեկուսացած ազգայնական պետութիւններ:  
Նորիւ հինգ այդ դրութեան Անդրկովկասի համար ստեղծ-  
ւել է ամենավատթար և ծանր մի կացութիւն: Մի երկիր,  
որ երկար ժամանակ, տասնեակ տարիների ընթացքում վա-  
րել է ընդհանուր տնտեսական մի կեանք, մի երկիր՝ որի  
տարրեր վայրերը շնորհիւ կապիտալիզմի զարգացման կապւած  
են եղել ամենասերտ կերպով միմիանց հետ, այժմ կտրատւել  
և անդամահատւել է: Եւ դա եղել է այնքան արտասովոր և  
արւեստական մի բան, որ շատ շուտ մերկացրել է ազգային-  
կապիտալիստական պետութիւնների սնանկութիւնն, ու ստի-  
պել է դրանց մտածել ընդհանուր տնտեսական միութեան  
մտան: Կովկասի լրազրներում մի շարք հրապարակախօսներ  
անհրաժեշտ են համարել քննել Կովկասեան պետութիւննե-  
րին միացնող տնտեսական պրօբլեմները: Դրանցից մի քանիսը,  
մասնաւրապէս հայկտիան և վրացական նայինալիզմի ներ-  
կալացուցիչներն առաջարկել են հիմնել ընդհանուր տնտեսա-  
կան մի կազմակերպութիւն: Այդ տնտեսական կազմակերպու-  
թեան նպատակը պիտի լիներ՝ գիւրացնել ապրանքների փո-  
խանակութիւնն Անդրկովկասի հանրապետութիւնների միջև,  
ստեղծել միանման պայմաններ ամբողջ Անդրկովկասի տնտե-  
սական վերածնութեան համար: Հայաստանի և Վրաստանի  
ներկալացուցիչներն այդ տնտեսական միութեան շերմ պաշտ-  
պանների գերն են սահմանական այն պատճառով, որ այդ  
պետութիւնները շնորհիւ Ադրբէջանի հանրապետութեան  
ագրէսուր տնտեսական քաղաքականութեան դրւել են ամե-  
նածանը պայմանների մեջ:

Ադրբէջանի կառավարութիւնն ոչ միայն խոշոր մաք-

սալին տուրքերով ժանրաբեռնել է իր երկրի պրօդուկտները, այլ և աշխատել է արևեստական մաքսալին քաղաքականութեամբ շահագործել իր հարեւաններին: Ալդպէս է զարւել նա, որովհետեւ իր ձեռքուժն ունեցել է ամենահարուստ մի շրջան՝ Ափշերոննեան այն թերակղղին, ուր գտնւում են աշխարհի ամենահարուստ նաւթալին աղբիւրները: Ազրբէչանը հաւատացած է եղել, որ իր հարեւանները չեն կարող գոյութիւն ունենալ առանց նաւթի ու ստիպւած պիտի լինեն վճարել բոլոր նոր մաքսալին տուրքերը: Սակայն այդ քաղաքականութիւնը չեր կարող դուրեկան լինել Վրաստանի և Հայաստանի համար:

Նոյնքան հետաքրքրական է մեզ համար նաև այն վիճարանութիւնն, որը բացւել է Թուրք-վրացական մամուլի էշերում Անդրէկովկասի գրամալին սիստէմի մասին:

Անդրէկովկասն ունի ամֆմ ևս իր սեփական գրամանշանները. այդ նշանները ապագրւում են Տիփիսում—Վրաստանի մայրաքաղաքում: Առանձին պայմանների համաձայն Հայաստանի կառավարութիւնն ևս օգտւել է այդ նշաններից: Այ է եղել Ազրբէչանի գործելակերպը:

Ազրբէչանը ունեցել է իր առանձին, սեփական գրամանշանները և կտրականապէս հրաժարւել է ընդունել ընդհանուր, համակովկասեան գրամանշանների անհրաժեշտութիւնը: Վարւելով ալդպէս նա անշուշտ, նկատի է ունեցել այն, որ Կովկասում Ազրբէչանի անտեսական կայութիւնն աւելի կալուն է և ուժեղ: Շնորհիւ Ափշերոննեան նաւթի Ազրբէչանի գրամանշանների արմէքն եղել է համեմատաբար բարձր: Թուրքեստանում և մանաւանդ Պարսկաստանում, Վրաստանի գրամանշանները չափազանց չնչին արմէք են ունեցել. այնինչ Ազրբէչանի նշանները գնահատւել են բականաչափ բարձր: Այդ հաղամանքը նկատել են Ազրբէչանի հարեւան պետութիւնները: Եւ նրանք առաջարկել են իր ժամանակ ընդունել համայն Անդրէկովկասի համար ընդ-

հանուր և միանման դրամտկան սիստեմ: Սուկայն դրա հետ ինչպէս երեւմ է, չեն համաձայնուել Ազրբէչանի կառավարիչները: Նրանք գտել են, որ Ազրբէչանը պէտք է ունենալ իր սեփական դրամանշանները:

Նատ բնորոշ է այն, որ մենշեիկները խարազանել են ամենախիստ կերպով թիւրք նացիոնալիստների քաղաքականութիւնը: Մենշեիկները նոյնիսկ անհրաժեշտ են համարել նկատել, որ Անդրէկովկասը իր տնտեսական ընդհանուր և միանման պայմանների շնորհիւ ստիպւած պիտի լինի պարտադիր գարձնել Կովկասի բոլոր հանրապետութիւնների համար ընդհանուր գրամապէնը սիստեմը: Այդ ինդրի մասին կովկասեան պարբերական գրականութեան մէջ ստեղծել է բաւականաչափ հետաքրքրական մի բանակռիւ, որից շատ որոշ երեւմ է, որ Կովկասը շնորհիւ ֆինանսական սեպարատ քաղաքականութեան, լիրատի, դրաել է ամենածանր կացութեան մէջ:

Աւելի ևս բարդ փոխարարերութիւններ են ստեղծել Անդրէկովկասի կառավարութիւնների միջև շնորհիւ հողալին խնդրի:

Հողալին խնդիրը Կովկասում ունի, որպէս լայտնի է իր առանձնայատուկ կողմները:

Այդ կողմերից երկուսի վրայ՝ ալսպէս կոչւած քոչի և զբարաշ թութեան վրայ մենք գէթ թռուցիկ կերպով պարտաւոր ենք կանգնել:

Քոչի խնդիրը բարդ է Կովկասում շնորհիւ այն հանգամանքի, որ քոչորների մեծամասնութիւնը բաղկացած է թիւրք տարրից: Եւ այդ տարրը շատ լաճախ անցնում է այն գիւղերի միջով և գէպի այն վալրերը, ուր բնակւում են հայերը: Քոչւարները սովորաբար աւերում են այն բոլորը, ինչ որ պատահում է նանապարհին: Այդ պատճառով քոչի ժամանակ բոչորների և նստակեաց կեանք վարող գիւղացիների միջև միշտ ծագում էին ոչ միայն հասարակ բաղխութեր,

ալլեւ տմենասուր ընդհարութիւնը: Այդ բոլորի առաջն տռնելու համար նոյնիսկ ծիապետական կառավարութիւնը ստիպւած էր պահել իր առանձին ոստիկանութիւնը և մշակել որոշ պարտադիր կանոններ և պայմաններ:

Մեղ համար անհերքելի է այն, որ ոչ մէկը ժամանակակից կովկասեան հանրապետութիւններից չէ կարող լուծել «ազգային հանրապետութեան» շրջանակներում քոչի խնդիրը: Ակներեւ է այն, որ Հայաստանի կառավարութիւնը միշտ պիտի պաշտպանէ հայերի շտհերը, իսկ Ազգրեէլանի հանրապետութիւնը քոչւորների պահանջները: Եւ երբ նկատի առնւի այն որ այդ երկու հանրապետութիւններն էլ «ազգային պետութիւններ» են, որ և՛ Ազգրեէլանում և՛ Վրաստանում իշխում են բացառապէս նացիօնալիստական տարրերը մեղ համար պարզ պիտի լինի, որ ոչ մէկը այդ պետութիւններից չի կարող լուծել այնքան հրատապ և սուր պրոլեմը: Դա վեր է կովկասեան ժամանակակից կառավարութիւնների ուժերից:

Աւելի ևս բարդ են այն փոխարարերութիւններն, որոնք ստեղծել և ստեղծում են այսպէս կոչւած «ջրաբաշխութեան» շուրջը:

Ցայտնի է, որ Անզրկովկասում հողագործութեան և մանաւանդ բամբակագործութեան վիճակը կախւած է նրանից, թէ որչափով է ոռողլում այս կամ այն դաշտավայրը: Այն հողերը, որոնք աւելի շատ և աւելի կանոնաւոր կերպով են ոռողլում—անշուշտ,—կարող են աւելի արդիւնք տալ, քան աւելի աղքատ հողերը: Ջրի խնդիրը միշտ եղել է ամենասուր խնդիրներից մէկը կովկասեան գիւղացիութեան համար: Եւ վերջինը յանախ իր սեփական ուժերով կազմակերպել է որոշ միջոցներ, արհեստական որոշ ծրագրներ ջրերի ոռողման համար: Նա շահագործել է բնական ուժերը: Այդ շահագործման պրօցեսում նա յանախ ընդհարութիւնը է ունեցել իր հարևանների հետ, որովհետեւ յանախ մի որևէ գիւղ օգտագործելով

գիւղի մօտ վազող գետի ջրըն անհրաժեշտաբար վնասու է հակառակ գիւղի շահերին: Եւ այդ հանդամանքը ստիպել է գիւղացիներին որոշ համաձայնութեան գալ հարևանների հետ, որոշ պարտադիր կանոններ սահմանել:

Ջրի խնդիրը շատ անդամ շօշափել է նոյնիսկ որոշ գաւառի և նահանգի համայն բնակչութեան շահերը: Դա եղել է համակալիկասեան և համապետական մի խնդիր: Եւ հէնց այդ պատճառով ռաւսական արսօլիւտիզմը լենւելով աեզական որոշ կազմակերպութիւնների վրայ ստեղծել է Անզրկովկասում կենտրոնացած ջրաբաշխական մի կազմակերպութիւն, որին յանձնարարել է ջրաբաշխութեան կանոնաւորումը: Լաւ թէ վատ միապետութիւնը մօտակայ անցեալում իր կազմակերպութիւնների օգնութեամբ լուծել է երկրի բնակչութեան համար այնքան սուր և բարել խնդիրը: Միապետութիւնը, որպէս երրորդ և անէտրալը մի ոյժ կարողացել է կարուել աեղային շահերից և ստեղծել ընդհանուր, համակովկասեան մի կազմակերպութիւն:

Անզրկացիների ներմուտքից լետոյ այդ համակովկասեան կազմակերպութիւնը ոչ թէ կանոարելազործւել, այլ վերջնականապէս քայլալու է: Անզրկացիները, ինչպէս մենք շեշտեցինք վերը, աշխատել են ամեն կերպ բազմացնել կովկասեան հանրապետութիւնների թիւր և ուժեղացնել աղդալին տարբեր հատւածների անտաղօնիզմը: Իսկ այդ հանդամանքը անհրաժեշտաբար քանդել է այն կապը, որը վատ թէ լաւ գոյութիւն ուներ անշեալում ջրաբաշխական պետական կազմակերպութիւնների միջև: Ծնորհիւ աղդալին հանրապետութիւնների կովկասի համայն դիւղացիութեան համար այնքան անհրաժեշտ համապետական մեքենան քայլալու է... Ոչ մէկը կովկասեան ժամանակակից պետութիւններից ընդունակ չէ ստեղծել ընդհանուր տնտեսական այն միութիւնը, որ կարող է հոգալ և մտածել թէ՛ ջրաբաշխութեան կազմակերպ-

ման և թէ ընդհանրապէս տնտեսական համակավկասեան քաղաքականութեան մասին:

Այդ բոլորը կարող է անել միմիայն համակավկասեան ախաղիսի մի պետութիւն, որը կը ունի ոչ թէ կենարոնախոլս աղջանական—բուրժուական առարկերի, այլ բացառապէս բանւորա—զիւղացիական խաւերի վրա:

Ընդհանուր տնտեսական քաղաքականութեան մասին կարող է հոգալ միմիայն ախաղիսի մի պետութիւն, որը կկարողանայ կապւել ամենասերտ կերպով Խորհրդավին Ռուսիայի հետ—այն Ռուսաստանի հետ, որը երկար տարիների ընթացքում տնտեսական ամուր թերութեան կապւած է եղել Կովկասի հետ: Առանց Ռուսաստանի Կովկասը չի կարող բարդաւահեր Առանց Խորհրդավին Ռուսաստանի Կովկասը պիտի դառնայ աղջային տարբեր հատաժների մշտական ընդհարումների տեսլու մի կենդրոնավայր...

Ահա ինչու կարելի է վստահաբար ասել, որ «Կօալիցիօն ժամանակաւոր կառավարութեան» հետեւզների, սկզի նացիօնական գործիչների, աղջանակոն հանրապետութիւնների և անգլիական իմպերիալիստաների, կարճատև գործունելութիւնը ոչ թէ ապացուցել է իմպերիալիզմի և կապիտալիզմի գործութեան իրաւունքը, այլ ցուցագրել է հակառակը: Այժմ աւելի քան երբէք պարզւել է Ընդրկովկասի բանւորա զիւղացիական տարբերի համար, որ միմիայն կոմմունիստական Ռուսիայի հետ կապւած Խորհրդավին Կովկասը կարող է բարեյաջող պարմաններ ստեղծել թէ երկրի տնտեսական բարդաւահման և թէ կովկասեան ժողովուրդների համերաշխ համաշխատակցութեան և ընդհանուր բարորութեան համար:

## IV.

Այդ բոլոր պարմանները ընաանհրաժեշտաբար պարարա հող են պատրաստել յեղափոխական շարժման համար: Ընդրկովկասի համայն աշխատաւորութիւնը օտարերկրեալ իմպե-

րիալիստների իւրօրինակ գործունելութիւնը աեսնելով եկել է ներկալումս այն համոզման, որ միմիայն Խորհրդավին Իշխանութիւնն է կարող վերջ տալ Կովկասում տիրող անիշխանութեան...Այդ համոզւմը ուժեղ է զիւղացիական բոլոր շրջաններում—ուր անդլիացիների հովանաւորութեամբ ստեղծւել է նորից պօմեշչիկ-կալւածատէրերի ամենաբիրտ բռնակալութիւն: Եւ Ազրբէցանում և՝ Վրաստանում ու Հայաստանում—ուր իշխում են կապիտալիստներն և պօմեշչիկները տիրում է ներկալումս յեղափոխական ամենաբարձր արամագրութիւն:

Ընդրկովկասի նացիօնալիւական տարրերի պաշտօնական օրգաններից մէկը հետեւեալ բնորոշ գիտողութիւններն է անում երկրի զրութեան մասին՝ «բաւական ժամանակ է անցել այն օրից, երբ տեղի ունեցաւ Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը, խորտակւեցին հին կարգերը, սակայն մինչեւ օրս էլ գոյութիւն ունի մի ամբողջ աշխարհ՝ որին խորթ է յեղափոխութեան արգասիքները. այդ աշխարհը Ընդրկովկասեան զիւղացիական աշխարհն է:

Դիւղերում մինչեւ օրս էլ թագավորում է հին ստրկութիւնը: Հին չինովնիկները դեռ ևս իրենց պաշտօնին են՝ զաւառապեար, պրիստաւը, ստարչինան, բէգերն ու աղաները մինչեւ օրս էլ շարսւակում են իրենց խաղը խեղճ ու անճար զիւղացիութեան գլխին: Անտեղ մինչեւ օրս էլ շարսւակում է կալւածատէրերի թագավորութիւնը, որոնք գիւղացիութեան հողին խեղդեցին, զրկեցին նրան մարդկաւթեան պատկերից»:

Այդ տաղերը բերելուց յետոյ «Կարմիր Բանւոր»-ը, Աստրախանի մեծաթանականների օրգանը հետեւեալ նիշտ նկատողութիւնն է անում՝ «Հայ աղաների թերթը այնպէս է ձեւացնում իրը թէ Հայաստանի զիւղերում այլ կերպ է այժմ արաբերութիւնները: Ինչ անել, երբ հակալեղափոխականները միշտ և միշտ կարճամիտ են: Աւ դուրս է դալիս, որ

հայ կալւածատէրերը, հայ բուրժուանները հրեշտակներ են, սրբեր—վատերը լոկ Աղրբէջանի իշխաններն են: Բայց ի՞նչու է մոռանում և Արևո-ը, որ Աղրբէջանի խօղէինները միենոյն դաշնակցականներն են միայն ալլագաւան...

Հայաստանում, ուր թագաւորում են նրանք աւելի՝ լադրութեան մէջ չեն աշխատաւոր գիւղացիութիւնը ու բանւորները»:<sup>\*</sup>)

Այն, որ Հայաստանում ևս քաղաքական դրութիւնը անկայուն է, երեսում է հէնց նրանից, որ այնտեղ տեղի են ունենում ամենասուր ժողովրդական բռնկումներ, որոնց առաջն առնելու համար Հայաստանում դաշնակցականների ձեռներէցութեածք ստեղծւել է մասուցերի գիկատուրա:

Անդրկովկասի պետութիւններից Աղրբէջանը անշուշտ աւելի ուժեղ չափով է ենթարկել բոլշևիդացիալի:

Այդ տեղի է ունեցել և տեղի ունի շնորհիւ այն հանգածանքի, որ Աղրբէջանումն է դանում ամրող Կովկասի կապիտալիստական եռուն կենտրոնը—պրոլետարական Բագուն...

Եւ հէնց այդտեղ էլ Բաղւում սուր է պրոլետարիատի անրաւականութիւնը տիրող կարգերից:

Այժմ արդէն Բաղւի պրոլետարիատը անցեալի դառն փորձերից լետու միանդամայն հեռացել է սոցիալ-դաւաճան կուսակցութիւններից և միմիայն Խորհրդավին Խուսաստանից է սպասում ազատութիւն...Ոչ ոք, ոչ Աղրբէջանի կառավարութիւնը և ոչ էլ նոյնիսկ անզիւցինները չեն կարողանում կռւել գործադուլաբին շարժման դէմ...

Ահա օրինակ ի՞նչ է զրում մուսաֆաթականների պաշտօնական օրդանը՝ «Աղրբէջան» օրաթերթը Բագւայ պրոլետարական շարժման մասին: Եկրին գործադուլներ, կրին բանւորական խառնակութիւններ:

Համարեալ թէ բոլոր գործարաններում բոլշևիկների

ագէնտները տարածում են իրենց յանցաւոր թոռոցիկները, որոնց մէջ կոչ են անում իրենց ձեռքը վերցնել իշխանութեան դեկը...

Ցաւակցաբար մենք պէտք է խոստովանենք, որ բոլշևիկական աղիտացիան մեծ լաջողութիւն ունի գիւղերում և անտապատներում:

Անհրաժեշտ է փրկել գոնէ գիւղացիութիւնը բոլշևիկների վտանգաւոր քարոզներից»...

Մենք չենք կանգնի այդ լրագրի միւս գիտողութիւնների վրայ:

Արդէն այդ մի քանի տողերն էլ բաւականալչափ որոշ են և ցալտուն: Իրենք հակալեղափոխականները արձանագրում են աշխատաւորական Կովկասի լեղաշրջման փաստը...

Յեղափոխութեան այդ պրօցէսը չի կանգնի: Նա աւելի ևս կուժեղանալ, կխստանալ և կարագանալ:

Այսօր աւելի քան, երբեկ անհերքելի է, որ Կովկասի ժողովրդական մաստաններն իրենք պիտի տապալեն մանր ազգային հանրապետութիւններն դրանց փլատակների վրայ նոր, Բանւորա-Գիւղացիական Խշանութիւն հաստատելու համար:



«Ազգային գրադարան



NL0196200

Հայաստանի Կոմմոնիստական Կուսակ հրատարակութեամբ լոյս են տեսել

- 1) Խուսափուանի Կոմմոնիստական Կուսակցութեան (Բոլշևիկների) ծրագիրը:
- 2) III Կոմմոնիստացինալի Պատրիօդան:
- 3) Ն. Լենին. «Թէղիներ բռոքժուական և պրոլետարական գեմոկատախայի մասին»—զինը՝ 50 կոպ.
- 4) «Հայաստանի Կոմմոնիստական Կուսակցութեան ներկայացուցիչի զեկոցումը III Կոմմոնիստական Կոմմոնիստացինալին»—զինը՝ 60 կոպ.
- 5) «Կոմմոնիստական Կոմմոնիստացինալի Մանեկինստը ամբողջ աշխարհի պօսինարիան»—զինը՝ 1 ր.
- 6) Ն. Լենին. «Եթերոք Կոմմոնիստացինալի տեղը պատճռութեան մէջ»—զինը՝ 1 ր.
- 7) Ն. Լենին. «Ի՞՞նչ պետք է լինի մեր կուսակցութեան անունը»—զինը՝ 50 կ.
- 8) ՊԱՇՆԵԿՈՒԿ. «Թաւակնի Բաժանումը»—զինը՝ 1 ր.
- 9) ԿԱՐԵՆԵՑՅԱՆ. «Եմագերիալիզմ և ԱբՃէնիա»—զինը՝ 3 ր.
- 10) «Կարմիր Կառավ»—զինը՝ 5 ր.

Հայկական Գործերի Կոմիսարիատի հրատարակութեամբ լոյս են տեսել

- 1) Ա. Արշ. Քեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
- 2) Ն. Լենին. «Նսամակ Կոմմոնիստան ըստուղներին»—զինը՝ 1 թուր.
- 3) Վ. ՔԲՇՁԼ; «Պողոսաքարական պողինան»—զինը՝ 2 ր.
- 4) ԶԻՑԻՆԻՆ. «Թէպէսոց Բազւում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազւի Խորհրդային Կշխանութիւնը»—զինը՝ 1 ր.
- 5) ՆԵՐՀԱՆ. «Դէպէսոց Բազավում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազւի Խորհրդային Կշխանութիւնը»—զինը՝ 1 ր.
- 6) Ն. Լենին. «Կարլ Մարքս» (Համառօտ կենսագութեանը և մարքսիզմի շարագութիւնը)—զինը՝ 1 ր. 50 կ.
- 7) ՆԵՐՀԱՆ. «Մուսական Ցեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան»—զինը՝ 1 ր.
- 8) Ն. ԲՈՅՆԵՐԻՆ. «Կոմմոնիստների ծրագիրը»—զինը՝ 3 ր.
- 9) Մ. ԳԱՅՆՈՎԻՉ (Ալեքսան) «Ասիան և իր զեքը համաշխարհագին պատերազմի մէջ»—զինը՝ 3 ր.
- 10) ԱԱԾ. ՌԱԴԻՆ. I. «Կոմմոնիստական Կուսակցութիւնը Գերմանիայում», II. «Ապար Լիբինենսոն (Լիբինեխով Նկարով)»—զինը՝ 1 ր.
- 11) «Եպօրեզային Կառավարութեան նոտան Վիլսոնին»—զինը՝ 75 կ.
- 12) «Մահմական աշխատանքարային դպրոցի կանոնադրութիւնը»—զինը՝ 2 ր.
- 13) Հ. ՅԱԿԱՓԵՅՆ. «Դէպէ բաղարական Կուսակցութիւնը»:
- 14) Գ. ԶԵՐՈՎԵՆԻ, Ի. ԽԱՐԵՆԵՆԻ և Լ. ՏՐՈՅՆԻ—Ն. Լենին» (Պաղեմիր ԿԵՇ Ուսուով)՝—զինը՝ 2 ր.
- 15) Ա. ՄՐՄԲՅ և Ֆ. ԷՆԳԵԼԸ «Կոմմոնիստական Սամիֆեստ»—Պէիսանսկի, Կառավուն և հեղինակների առաջարաններով—զինը՝ 3 ր.
- 16) Պ. ԼԱՓԱՐԴ «Տնտեսական Ե. ոլիցիան և Կոմմոնիգման»—զինը՝ 50 կ.
- 17) ԱՐԱԲՈՒՍԻԿ. «Ա՞նչ ըստ Ե. ոլիցիային Կշխանութիւնը և ինչպէս է առ կազմում»—զինը՝ 2 ր.
- 18) «Գրանցինեան Մէջ Ցեղափոխութիւնը»—զինը՝ 3 ր.
- 19) Ա. ԿԵՐՋԵՆՅԵՆ. «Ենչըլս վարել ժողովը»—զինը՝ 2 ր. 50 կ.
- 20) Ա. ԵՐԵՎԱՆԻ. «Արքայիստական Խորհրդ Հանրապետութիւնն»—զինը՝ 1 ր.
- 21) ԱՐՄԵՆՈՍԻ. «Ա՞նչ հետ Եր դուր, զիւզացիր»—զինը՝ 50 կ.